

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՄԵՐ



Հ.Հ.

ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅԱՆ

Յ³ Ë Á ĭ ñ³ İ³ Ý

2007

ԾՐԱԳԻՐ

ՄԵՐ ՀԻՆ ԸՆԿԵՐԸ ԴԱՇՆԱԿՅՈՒԹՅՈՒՆՆ Է



Հարգելի ընտրող,

Հայ Յեղափոխական Դաշնակցության
նախընտրական ծրագիրը անդրադառնում է
քո կյանքում առկա հիմնախնդիրներին
և տալիս է դրանց լուծման ուղիները:

Մեր ծրագիրը ելնում է հասարակական կյանքի
բարեփոխման, բարոյահոգեբանական մթնոլորտի
առողջացման, սոցիալական արդարության
հաստատման անհրաժեշտությունից:

Դաշնակցությունը կամք ու կարողություն ունեցող
այն քաղաքական ուժն է, որը պատրաստ է
հետևողականորեն իրականացնել իր ծրագրերը
և անշահախնդիր ծառայել իր ժողովրդին
և պետությանը:



ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ, ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պետականության հզորացման, ազգային նպատակների իրականացման առումով մեր երկրում ժողովրդավարության կայացումը և քաղաքացիական հասարակության ձևավորումը այլընտրանք չունեն:

Իրական ժողովրդավարության հաստատման համար անհրաժեշտ է ոչ միայն հռչակել մարդու իրավունքներն ու ազատությունները, այլև՝ ձևավորել դրանք ապահովող համապատասխան քաղաքական, տնտեսական և սոցիալական մեխանիզմներ:

Ժողովրդավարական արժեքների արմատավորման և քաղաքացիական հասարակության կայացման գործում առաջնահերթ նշանակություն ունի պետական կառավարմանը հասարակության լայն շրջանակների մասնակցությունը:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Պետականաշինության ներկա փուլում առաջնահերթ է սահմանադրական փոփոխություններով ամրագրված նոր նորմերի կենսագործումը, իրավական համակարգի կատարելագործումը, հասարակության համախմբումը և ներքաղաքական կայունությունը:

Կառավարման արդյունավետ համակարգի ձևավորման համար անհրաժեշտ է.

- ապահովել օրենսդիր, գործադիր, դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի լիարժեք կենսագործումը,
- բացառել պետական կառավարման մարմինների կողմից գործառույթների կրկնությունն ու առանձին գործառույթների անտեսումը, սահմանել պետական կառավարման մարմինների կազմի, կառուցվածքի և հաստիքների օպտիմալ թվաքանակ,
- ստեղծել հանրային ծառայության միասնական համակարգ,
- ներդնել գործուն և իրատեսական մեխանիզմներ հանրային ծառայության որակի, ծառայողների մրցունակության և պաշտպանվածության բարձրացման, կոռուպցիոն ռիսկերի նվազեցման և հանրային արժանապատիվ ծառայություն ապահովելու նպատակով,
- տարածքային քաղաքականության ոլորտում ապահովել պետության արդյունավետ վարչարարությունը և մարզերի ներդաշնակ զարգացումը, ընդլայնել մարզի խորհրդի լիազորությունների շրջանակը,
- հստակեցնել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների փոխհարաբերությունները,

- ընդլայնել համայնքի բյուջեի ձևավորման աղբյուրները, ստեղծել օրենսդրական մեխանիզմներ և ֆինանսական խթաններ՝ միջհամայնքային միավորումների կազմավորումը խրախուսելու համար:

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ

Երևան քաղաքի կառավարումը պետք է իրականացվի հետևյալ սկզբունքների համաձայն.

- մայրաքաղաքը պետք է ունենա համամասնական ընտրակարգով կազմավորված ներկայացուցչական մարմին՝ Երևանի քաղաքային խորհուրդ (ավագանի), որին կփոխանցվեն տարածքային կառավարման որոշ գործառույթներ,
- մայրաքաղաքի գործադիր իշխանության և քաղաքային խորհրդի ղեկավար կհանդիսանա Երևանի քաղաքապետը, որը կընտրվի ուղղակի ընտրությունների միջոցով,
- մայրաքաղաքը կկառավարվի քաղաքապետի կողմից տարածքային ստորաբաժանումների (պրեֆեկտուրա, թաղ) միջոցով:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կոռուպցիայի դեմ համակարգային պայքարի կազմակերպումը ՀՀ-ի կողմից մշտապես դիտարկվել է որպես Հայաստանի Հանրապետությունում իրական ժողովրդավարության, երկրի կայուն զարգացման, քաղաքացիական հասարակության կայացման, սոցիալական արդարության և համերաշխության, օրենքի գերակայության հաստատման հիմնական գրավականներից մեկը: Հակակոռուպցիոն քաղաքականության հաջողության երաշխիքը իշխանությունների քաղաքական հստակ կամքի դրսևորումն է և հասարակության ներգրավումը այս գործընթացում:

Հակակոռուպցիոն քաղաքականության առաջնահերթ միջոցառումներն են.

- ամբողջական լիազորություններով օժտված և հասարակության վստահությունը վայելող պետական անկախ գործակալության ստեղծումը,
- պետական պաշտոնյաների, նրանց ընտանիքների արժանավայել կենսամակարդակն ապահովող աշխատավարձի սահմանումը,
- քաղաքացիների եկամուտների հայտարարագրման մեխանիզմների կատարելագործումը,
- օրենքների ընդունման, որոշումների կայացման գործընթացում հասարակության ներգրավման գործունե մեխանիզմների ստեղծումը,
- պետական մարմինների գործունեության առավելագույն թափանցիկության և հրապարակայնության ապահովումը:

ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

20-րդ դարի վերջին տեղի ունեցած աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական տեղաշարժերի, գլոբալացման և ինտեգրացման գործընթացների խորացման պայմաններում, սեփական ինքնությունն ու քաղաքական դիմագիծը պահպանելու, միջազգային թատերաբեմում Հայաստանն արժանապատվորեն ներկայացնելու համար անհրաժեշտ է վարել նախաձեռնողական և կշռադատված արտաքին քաղաքականություն:

Արտաքին քաղաքական մարտավարությունը պետք է ուղղված լինի հայ ժողովրդի կենսական պահանջներից բխող ռազմավարական խնդիրների իրականացմանը, պատմական հեռանկարում մեր պետության զարգացմանն ու հզորացմանը:

Հայ Յեղափոխական Դաշնակցությունը գտնում է, որ արտաքին քաղաքական հարաբերություններում անհրաժեշտ է առաջնորդվել բացառապես ազգային շահերով, առանց տուրք տալու այս կամ այն կուսակցության, սոցիալական դասի կամ պետական-քաղաքական գործիչի մղումներին:

Արցախյան հիմնախնդիրը Հայ Դատի բաղկացուցիչ մասն է և պետք է առանցքային տեղ գրավի Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ:

Թուրքիայի հետ հարաբերությունները մնում են չկարգավորված, քանի որ այս պետությունը շարունակում է Հայաստանի նկատմամբ իր թշնամական քաղաքականությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատելու ու հայ-թուրքական սահմանը բացելու դիմաց նախապայմաններ է ներկայացնում: Երկկողմ հարաբերություններ կառուցելու նման ոճը անընդունելի է Հայաստանի համար:

ԲԱՆԱԿ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Պետության պաշտպանունակությունը և բանակի մարտունակությունը բարձրացնելու համար կարևորում ենք՝

- Հայրենիքին ծառայելու արժանավայել պայմանների ստեղծումը,
- զինված ուժերում բարոյահոգեբանական մթնոլորտի բարելավումը,
- արատավոր, ոչ կանոնագրային հարաբերությունների բացառումը,
- զինծառայողների, զոհվածների ընտանիքների, պատերազմի հաշմանդամների, վետերանների սոցիալական խնդիրների լուծումը,
- ինչպես պարտադիր, այնպես էլ պրոֆեսիոնալ կամավոր-պայմանագրային զինվորական ծառայությունը:
- հայ երիտասարդների ռազմահայրենասիրական և գաղափարական դաստիարակությունը:

Հայ երիտասարդը բանակ պետք է գա ամբողջապես գիտակցելով իր առաքելությունը, իսկ ծառայությունից հետո վերադառնա որպես հասարակության լիարժեք, ակտիվ և առողջ անդամ:

ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամենամեծ ազդեցությունը հայության միասնականության և համախմբման համար ունենալու են այն դրական տեղաշարժերն ու գործընթացները, որոնք պետք է կատարվեն Հայաստանի Հանրապետության հասարակական կյանքում: Անհրաժեշտ է, որ հայությունը համոզվի արդարության, իրավահավասարության սկզբունքների վրա հիմնված, բարոյական, ազգային և համամարդկային բարձր արժեքներով և ստեղծագործ աշխատանքային կյանքով ապրող հասարակություն ստեղծելու հարցում պետության վճռականության մեջ:

ՀՀ Դաշնակցությունը գտնում է, որ այս ոլորտում պետությունը պետք է.

- մշակի և գործադրի Սփյուռքից Հայաստան ներգաղթի համալիր ծրագիր,
- քաջալերի Ամենայն Հայոց և Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսությունների համագործակցությունը, ինչը չափազանց կարևոր է ազգային հոգևոր-մշակութային միասնականության տեսանկյունից և հետագայում կարող է նախադրյալներ ստեղծել Հայ Առաքելական Եկեղեցին մեկ միասնական կառույցով օժտելու համար:
- նպաստի Հայաստանի և Սփյուռքի տեղեկատվական միջոցների բազմակողմանի համագործակցությանը, համահայկական տեղեկատվական դաշտի ստեղծմանը:
- խրախուսի հայագիտության ուսուցման նվազագույն ծրագրի մշակումը, որի հիմնական տարրերը կիրառելի կլինեն հայկական բոլոր կրթական հաստատությունների և դպրոցների համար:

■ իր հովանավորության տակ առնի արևմտահայերենի ուսումնասիրությունը, պահպանությունը և զարգացումը՝ ոչ միայն հայապահպանության նկատառումներից ելնելով, այլև որպես հայոց լեզվի հարստության աղբյուր և հայերենի բնականոն զարգացման նախապայման:

■ նախադրյալներ ստեղծի արևմտահայերենի և արևելահայերենի մերձեցման, հայերենի ուղղագրության միասնականացման, նրանց արդեն իսկ ընթացող փոխադարձ հարստացման գործընթացը խթանելու համար:

■ ընդլայնի Հայաստանում սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման և Հայաստանի ուսումնական հաստատություններում սփյուռքահայ ուսանողների ընդունելության ծավալները:

Հայաստանի Հանրապետությունը, գործելով այլ երկրների հետ ունեցած միջազգային պայմանագրերի շրջագծում, ելնելով ազգային փոքրամասնությունների միջազգայնորեն ճանաչված կրթական-մշակութային իրավունքներից, պետք է նպաստի.

- հայկական համայնքների առավելագույն ինքնակազմակերպմանը և համայնքների միասնականության ամրապնդմանը հայոց լեզվի, հայկական մշակույթի և կրթության հենքի վրա:
- հայկական քաղաքական, մշակութային և տնտեսական լորբինգի հզորացմանը՝ ի շահ Հայաստանի Հանրապետության հզորացման, Արցախի հարցի արդարացի կարգավորման, Հայոց Ցեղասպանության միջազգային ճանաչման, Ջավախքի հայության բոլոր իրավունքների պաշտպանության եւ համազգային այլ խնդիրների լուծման:

Հայաստան-Սփյուռք բարդ և բազմակողմանի հարաբերությունները կանոնակարգել, դրանց զարգացման դինամիկան ուսումնասիրել և ուղղորդել պետք է ինչպես պետական, այնպես էլ հասարակական մակարդակներով, հստակ սահմանազատելով նրանց խնդիրները և գործառնությունները:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Տնտեսության արդյունավետ ճյուղային կառուցվածքը երկարաժամկետ և հաստատուն տնտեսական աճի նախադրյալներից է: Այս առումով Դաշնակցությունը կարևորում է արդյունաբերության առաջանցիկ զարգացումը և արդյունաբերական երկրի կարգավիճակի ձեռքբերումը:

Այդ նպատակով անհրաժեշտ ենք համարում մշակել և իրագործել արտահանման կողմնորոշում ունեցող արդյունաբերական քաղաքականություն, որը ենթադրում է.

- բարձրացնել պետության պատասխանատվությունը արդյունաբերության նոր, տեխնոլոգիական առումով առաջատար սեկտորների վերականգնման կամ ստեղծման գործընթացներում,
- արդյունաբերական ձեռնարկությունների խելամիտ և ընտրանքային պաշտպանություն և աջակցություն այնքան ժամանակ, քանի դեռ դրանք բավականաչափ չեն ամրապնդվել օտարերկրյա ընկերությունների հետ մրցակցելու համար,
- ակտիվացնել տնտեսությունում պետության միջատության դերը ոչ միայն ֆինանսական կարգավորման ձևով, այլև՝ վերարտադրության պայմանների և

գործընթացների վրա ուղղակի ազդեցության ճանապարհով.

- ստեղծել բարենպաստ պայմաններ արդյունաբերությունում ներդրումների ներգրավման համար,
- իրականացնել «աճի կետերի» նպատակաուղղված աջակցության քաղաքականություն:

ՀԱՐԿԱ-ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ԽՁԱՆՆԵՐԻ ՈՒԺԵՂԱՑՈՒՄ

Բյուջետային քաղաքականությունը պետք է լուծի սոցիալական հիմնախնդիրները՝ միաժամանակ խրախուսելով տնտեսության առաջնային ճյուղերի զարգացումը և նպաստի հայրենական արտադրության մրցունակության բարձրացմանը:

Փոքր բյուջեն անգամ սոցիալական ծախսերի մեծ տեսակարար կշռի դեպքում չի կարող ապահովել նույնիսկ այդ խնդիրների լիարժեք լուծումը:

Դաշնակցությունը կարելի է խնդիր է դիտում պայքարը ստվերային տնտեսության դեմ, որի արդյունքում՝

- հարկային մուտքերի ծավալն առաջիկա 5 տարվա ընթացքում կհասնի ՀՆԱ 25 տոկոսին,
- հարկային բեռը հավասարաչափ կբաշխվի հարկատուների միջև:

Հարկաբյուջետային համակարգի կատարելագործման նպատակով առաջնահերթ ենք համարում ձեռնարկել հետևյալ միջոցառումները՝



- հարկային և մաքսային համակարգերը միայն ֆիսկալ խնդիրներ լուծող մարմիններից վերածել տնտեսության կարգավորման իրական մեխանիզմների,
- ստեղծել պայմաններ արդար մրցակցության համար, բացառել հովանավորչությունը,
- էապես պարզեցնել հարկային համակարգը, խմբավորել հարկատեսակները, կրճատելով հարկերի քանակը,
- հարկման ծանրության կենտրոնն անուղղակի հարկերից տեղափոխել ուղղակի հարկերի վրա,
- հարկերը հավաքել ոչ թե պլանային ցուցանիշների, այլ տնտեսվարողի փաստացի և թափանցիկ գործունեության արդյունքների հիման վրա,
- հնարավորինս պարզեցնել արտահանման մաքսային ընթացակարգերը և վերացնել բյուրոկրատական խոչընդոտները,
- ներդնել հաշվետվությունների ընդունման էլեկտրոնային համակարգը՝ հնարավորինս նվազեցնելով պաշտոնյաների և գործարարների ուղղակի շփումները,
- ամբողջությամբ ներդնել ծրագրային բյուջետավորման համակարգը:

ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱ

Մակրոտնտեսական ցուցանիշները և դրամավարկային քաղաքականությունը ինքնանպատակ չեն, այլ տնտեսական զարգացման միջոց:

Չընդունելով դրամավարկային քաղաքականության պասիվ-հարմարվողական բնույթը, որի արդյունքում այն հեռու է մնում ամբողջ տնտեսությանը, դրա առանձին ճյուղերին, ներքին արտադրողներին ու արտահանողներին վերաբերող խնդիրներից, մենք մտադիր ենք այն վերածել տնտեսական քաղաքականության առանցքային և որոշիչ լծակի:

Կառավարության և Կենտրոնական բանկի քաղաքականությունը պետք է.

- նպատակաուղղվի ոչ միայն գնաճի զսպմանը, այլ նաև տնտեսական աճի ապահովմանը, գործազրկության նվազեցմանը, հայրենական արտադրության խրախուսմանը և հայկական ապրանքների արտահանմանը,
- ապահովի, որպեսզի Հայաստանը ունենա ոչ միայն առողջ բանկեր, այլև տնտեսության աճը վարկավորող բանկեր,
- պայմաններ ստեղծի փոքր եւ միջին գործարարության, գյուղատնտեսության, արդյունաբերության վարկավորման համար՝ արտաքին և ներքին ռեսուրսների ներգրավման միջոցով,
- ձևավորի հեշտացված և մատչելի ընթացակարգեր՝ արտահանման և ներքին սպառմանն ուղղված ապրանքների արտադրության ֆինանսավորումը խրախուսելու նպատակով:

Մենք հանդես ենք գալիս կայուն, կարգավորված և մատչելի ֆինանսական շուկայի կայացման դիրքերից, որտեղ ներդրողների իրավունքներն ու օրինական շահերը կլինեն պաշտպանված, իսկ ֆինանսական ռեսուրսներ փնտրող անձինք կունենան այլընտրանքային մեխանիզմներ և նախընտրելի պայմաններով դրանք ձեռք բերելու հնարավորություն:

Գործարարության և եկամտաստեղծ գործունեության աջակցության մեր կողմից առաջակրվող մոտեցումը միաժամանակ կառուցվում է քաղաքակիրթ ֆինանսական և կառավարչական փոխհարաբերությունների, կորպորատիվ կառավարման և թափանցիկ գործունեության մշակույթի, սոցիալական խոցելի խմբերին հավասար հնարավորությունների ընձեռնման մեխանիզմների ներդրման հիման վրա:

ԱՐՏԱՔԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Հայաստանը չի կարող ապահովել հաստատուն և որակական տնտեսական աճ առանց արտահանման ծավալների ավելացման և արտաքին շուկաներ ներխուժման: Արտահանման աճը կնպաստի ոչ միայն տնտեսական զարգացմանը և զբաղվածության աճին, այլև համաշխարհային ինտեգրմանը, Հայաստանի միջազգային հեղինակության բարձրացմանն ու ամրապնդմանը, մշակութային և տեխնոլոգիական զարգացմանը, ներքին կարողությունների և փորձառության աճին:

Հայաստանը առանց գրագետ արտաքին տնտեսական քաղաքականության չի կարող արդյունավետ օգ-

տագործել բաց տնտեսության առավելությունները: Արտաքին շուկաներ դուրս գալու համար գոյություն ունեն վարկային, տեղեկատվական, ենթակառուցվածքային, կադրային և այլ արգելքներ, որոնք անհրաժեշտ են դարձնում արտաքին առևտրի կարգավորման հնարավոր միջոցների ամբողջ զինանոցի օգտագործումը:

Նման քաղաքականությունն ենթադրում է՝

- ակտիվ արտաքին տնտեսական հարաբերություններ,
- արտահանման համար պարզեցված վարչական ընթացակարգեր,
- միջպետական համաձայնագրերի ինստիտուտի արդյունավետ գործադրում,
- Հայաստանի և հայկական ապրանքների ու ապրանքանիշերի իմիջի ձևավորում և բարելավում,
- ֆինանսական խոչընդոտների վերացում և արտահանման ֆինանսավորման, վարկավորման զանազան սխեմաների կիրառում,
- արտահանման և արտահանման վարկավորման ապահովագրության համակարգի ստեղծում:

Արտաքին տնտեսական քաղաքականության մյուս կարևոր ուղղությունը տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ուղղակի ներդրումների ներգրավումն է: Հայաստանում համաշխարհային ճանաչում ունեցող բրենդի արտադրությունը և դրա գովազդը նույնպես էականորեն կփոխի համաշխարհային շուկայի մոտեցումը հայկական ապրանքներին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Երկրի պարենային անվտանգության ապահովման, գյուղական բնակչության եկամուտների ավելացման, գյուղի սոցիալական զարգացման հիմնախնդիրների լուծման նպատակով անհրաժեշտ է բազմակողմանի պետական աջակցություն ցուցաբերել գյուղատնտեսությանը: Հայկական գյուղը պետք է վերածվի կայուն եկամտաստեղծ բնակավայրի: Մեզ համար ընդունելի չէ գյուղատնտեսական հողերի այնպիսի խոշորացումը, որը կարող է հանգեցնել գյուղերի քայքայմանը:

Գյուղատնտեսության զարգացման ներկա փուլում Դաշնակցությունը գտնում է, որ ագրարային քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի հետևյալ հիմնախնդիրների լուծմանը՝

- աստիճանաբար նվազեցնել երկրի կախվածությունը հացահատիկի, անասնակերի, մսամթերքի և կաթնամթերքի արտադրության համար անհրաժեշտ հումքի ներմուծումից,
- ընդլայնել գյուղատնտեսական մթերքների իրացման հնարավորությունները՝ ինչպես ներքին շուկայի պաշտպանության, այնպես էլ արտահանումների խրախուսման միջոցով,
- նվազագույնի հասցնել գյուղատնտեսական մթերքների կորուստները, ձևավորել գյուղ-քաղաք, գյուղ-վերամշակող ձեռնարկություն, գյուղատնտեսական ապրանքներ-արտահանում տեխնոլոգիական հստակ շղթա,
- բարելավել ոռոգման համակարգը, բարձրացնել ջրօգտագործման արդյունավետությունը, անհրաժեշտության դեպքում բյուջետային սուբսիդիաներ

տրամադրել ոռոգման ջրի բարձր ծախսեր ունեցող տարածաշրջանների գյուղացիական տնտեսություններին,

- ընդլայնել գյուղացիական և ֆերմերային տնտեսությունների ֆինանսավորման ծավալները և կատարելագործել վարկավորման համակարգը, ստեղծել գյուղատնտեսության վարկավորման երաշխիքային հիմնադրամ,
- ստեղծել բնական աղետներից գյուղացիական տնտեսությունների գործունեության ապահովագրման գործուն համակարգ,
- գյուղական վայրերում զբաղվածության ապահովման նպատակով՝ հատուկ կարևորություն տալ տեղերում գյուղատնտեսական մթերքների վերամշակման ձեռնարկությունների հիմնադրման, մասնագետների վերապատրաստման և դրան առնչվող հարցերին,
- խրախուսել ագրարային ոլորտում մանր գյուղացիական տնտեսությունների միջև կոոպերացիոն կապերի ընդլայնումը և զարգացումը, ինչպես նաև համատեղ տնտեսավարման եղանակների կիրառումը:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Տրանսպորտի բնագավառում ձեռնարկվելիք գործողությունների առաջնային ուղղություններն են.

- ճանապարհային տնտեսությունում նոր, անվտանգ և ապահով ճանապարհների կառուցումը, գործողների վերակառուցումը, դրանց թողունակության և անվտանգության մակարդակի բարձրացումը, ճանապարհային երթևեկության կանոնակարգումը,

- երկաթուղային տրանսպորտում՝ Հայաստան-Իրան երկաթուղու կառուցումը և Հայաստանի երկաթուղային ցանցի ինտեգրումը տարածաշրջանային փոխադրացանցին, Երևանի երկաթուղային կայարանի վերակառուցումը, ինչպես նաև մետրոպոլիտենի արդիականացումն ու ընդլայնումը, Հայաստանի երկաթուղու վերակառուցման և զարգացման ծրագրում ներքին մասնավոր ներդրումային միջոցների ներգրավումը,
- ավտոմոբիլային տրանսպորտի ոլորտում՝ շարժակազմի արդիականացումը, տրանսպորտային միջոցների տեխնիկական վիճակի նկատմամբ մշտական և իրական հսկողության սահմանումը, ուղևորների սպասարկման որակի բարձրացումը, Երևանից դուրս բեռնափոխադրումների պահեստային տերմինալների ստեղծումը, ավտոմոբիլային տրանսպորտային փոխադրումների ասպարեզում իրական մրցակցության պայմանների ստեղծումը, հայկական ուղևորատար և բեռնատար ավտոտրասնպորտային ընկերությունների մրցունակության բարձրացումը:
- օդային տրանսպորտի բնագավառում՝ ազգային փոխադրողի ձևավորումն ու զարգացումը՝ որպես գերակա ուղղություն, շարժակազմի շարունակական արդիականացումը, կադրերի պատրաստումը և վերապատրաստումը, արտաքին հարաբերություններում ազգային փոխադրողի գործունեության աջակցությունը, պետության կարգավորիչ դերի բարձրացումը և պետական մարմինների խիստ հսկողությունը թռիչքների և ավիացիոն անվտանգության պահանջների խստագույն կատարման նկատմամբ:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

Նավթի և գազի բնական պաշարների բացակայության պայմաններում Հայաստանի համար կենսական նշանակություն ունի էներգետիկ անվտանգության ապահովման հիմնախնդիրների լուծումը:

Էներգետիկայի ոլորտում անհրաժեշտ է.

- ձեռնարկել և իրականացնել միջոցառումներ՝ ուղղված երկրի էներգետիկական անվտանգության մակարդակի բարձրացմանը,
- ապահովել ՀԱԷԿ-ի պահպանումը և անվտանգությունը, իսկ շահագործման դադարեցումը պայմանավորել նոր՝ անվտանգության ժամանակակից չափանիշներին համապատասխանող համարժեք հզորության ԱԷԿ-ի կառուցմամբ,
- ապահովել այլ երկրներից էներգառեսուրսների մատակարարման անընդհատությունն ու տարատեսականացումը,
- պետության և այլ ներդրողների ֆինանսական միջոցներով խթանել Հայաստանում առկա հիդրոպոտենցիալի օգտագործման արդյունավետության բարձրացմանը և էներգիայի այլընտրանքային աղբյուրների ստեղծմանն ուղղված գիտական և ինժեներատեխնիկական հետազոտությունները:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանական քաղաքականությունը անհրաժեշտ ենք համարում կառուցել և իրականացնել մշտապես ելնելով մարդու և շրջակա միջավայրի ներդաշնակ փոխհարաբերության սկզբունքից: Այս ասպարեզում Դաշնակցությունը կարևորում է.

- բնապահպանությանը առնչվող խնդիրների ռազմավարական ծրագրավորումը, ինչպես նաև համապատասխան մասնակիցների միջև համակարգումն ապահովելու նպատակով վարչական կառույցների և ընթացակարգերի ուժեղացումը,
- շրջակա միջավայրի ազգային մոնիտորինգի համակարգի ձևավորումը և տնտեսավարող սուբյեկտներին էկոլոգիական ռեյտինգի շնորհման համակարգի ձևավորումը և կիրառումը,
- բնապահպանական հիմնախնդիրների լուծման ուղղությամբ պետական, տեղական ինքնակառավարման մարմինների և հասարակական կազմակերպությունների համագործակցությունը, բնապահպանական տեղեկատվության մատչելիության և հասարակայնության մասնակցության վերաբերյալ ընթացակարգերի սահմանումը,
- Սևանա լճի բնահամակարգի վերականգնումը, պահպանումը և արդյունավետ օգտագործումը,
- վտանգավոր քիմիական, ռադիոակտիվ նյութերի և թափոնների պահպանման համապարփակ վերահսկումը,
- ջերմածին գազերի, կենսաբազմազանության, հատուկ հսկվող տարածքների, բնական պաշարների, թափոնների, ջրային ռեսուրսների ինտեգրացված

կառավարման, անապատացման ոլորտներում առկա ազգային ծրագրերի և նախագծերի մշակման և իրականացման շարունակումը,

- ծառահատված անտառների և քաղաքներում, հատկապես՝ Երևանում, հասարակական օգտագործման զբոսայգիների վերականգնումը և ընդլայնումը,
- բնակչության բնապահպանական իմացության ու կրթվածության մակարդակի բարձրացումը և էկոտուրիզմի զարգացումը:

ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանության համար անհրաժեշտ ենք նկատում.

- նպաստել սննդի անվտանգության համակարգի ձևավորմանը,
- ապահովել ապրանքային շուկայում արդար տնտեսական մրցակցությունը և կանխել զների արհեստական բարձրացումը,
- միջոցներ ձեռնարկել մոլորեցնող գովազդի կանխման և դրա հետևանքների վերացման ուղղությամբ,
- հետամուտ լինել մատուցվող մենաշնորհային ծառայությունների արդար սակագների և հավասարակշռված քաղաքականության ձևավորմանը,
- միջոցներ ձեռնարկել սպառողների իրավունքների պաշտպանության պետական մարմինների գործունեության թափանցիկության և հաշվետվողականության ապահովման ուղղությամբ:



ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ժողովրդագրական բացասական միտումները առաջացրել են բնական աճը բնական նվազման վերածվելու միանգամայն առարկայական վտանգ: Ժողովրդագրական իրադրության բարելավման ինքնակարգավորման հնարավորություններն իրատեսական չեն: Դրան հասնելու միակ ուղին ակտիվ, նպատակային ու հետևողական պետական քաղաքականությունն է, որի արդյունքում ակնկալվում ենք՝

- Հայաստանի Հանրապետության բնակչության աճ՝ 2012թ. բնակչության թիվը հասցնելով 4 միլիոնի սահմանագծին,
- բնակչության հավասարակշռված և համամասնական սեռատարիքային կառուցվածք,
- երկրի կայուն և տարածքային համաչափ զարգացում:

Նշված քաղաքականությունն ուղղված է լինելու ծնելիության մակարդակի աճին, մահացության մակարդակի նվազեցմանը, կյանքի տևողության ավելացմանը, արտագաղթի կասեցմանը և ներգաղթի խրախուսմանը:

Ժողովրդագրական ակտիվ քաղաքականություն ծավալելու գործում մեծ դերակատարություն ենք վերապահում սիյուռքի հասարակական, քաղաքական շրջանակներին:

Դաշնակցությունը ժողովրդագրական ճգնաժամի հաղթահարումը՝ պետական քաղաքականության գերակայություն, ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ, իսկ ընտանիքը՝ պետական ժողովր-

դագրական քաղաքականության հիմնական սուբյեկտ է համարում:

ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ, ԱՇԽԱՏԱՆՔ ԵՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ

Զբաղվածության ոլորտում պետության դերակատարությունը Դաշնակցությունը տեսնում է ոչ միայն ուղղակի կամ անուղղակի մեթոդներով կարգավորիչ գործառնությունների իրականացման, այլև նրա ակտիվ միջամտության և կորպորատիվ սոցիալական պատասխանատվության գործուն համակարգի ձևավորման մեջ:

Վերածնելով զբաղվածության պասիվ քաղաքականությունը ագրեսիվ կամ ակտիվ քաղաքականության՝ մեր մտադրությունն է այն վերակառուցել տնտեսական աճի խթանման, երկրի տարածքային համաչափ զարգացման, բնակչության կենսամակարդակի բարձրացման, աշխատաշուկայում առաջարկի և պահանջարկի հավասարակշռվածության ապահովման, գործազրկության և թերզբաղվածության վերացման ուղղությամբ:

Աշխատանքի բնագավառում մեր քաղաքականությունը նպատակաուղղված է լինելու արդյունավետ և զարգացած աշխատաշուկայի ձևավորմանը, որտեղ աշխատողները ապահովված կլինեն պատշաճ աշխատավարձով, առողջ, անվտանգ և ընդունելի պայմաններով աշխատանքով, իսկ գործատուները՝ անհրաժեշտ որակավորմամբ աշխատուժով:

Այս ոլորտում անհրաժեշտ է.

- վերանայել աշխատանքային օրենսդրությունը՝

նպատակ ունենալով պաշտպանել աշխատողների և գործատուների հիմնական իրավունքները և ապահովել արժանապատիվ աշխատանք,

- ամրագրել աշխատանքային իրավունքների պաշտպանության նկատմամբ ոչ պետական (արհեստակցական կազմակերպությունների և գործատուների միությունների) հսկողական գործառույթները, կատարելագործել պետական վերահսկողության համակարգը,
- զարգացնել աշխատավարձի կարգավորման մեխանիզմները՝ երաշխավորելով սոցիալական ընդունելի մակարդակից ոչ ցածր աշխատավարձ ստանալու անքակտելի իրավունքը,
- ուժեղացնել սոցիալական գործընկերության համակարգը:

Մեր մոտեցմամբ աշխատանքի վարձատրության ամենամսյա նվազագույն չափը պետք է սահմանվի հաշվի առնելով՝

- վարձու աշխատողի և նրա ընտանիքի կենսագործունեության բավարար պայմանները, կենսաապահովման նվազագույն զամբյուղի մեծությունը, գների աճը, սոցիալական տարբեր կարգավիճակ ունեցող խմբերի կենսամակարդակը, միջին աշխատավարձի մեծությունը, սոցիալական նպաստների չափերը,
- տնտեսական աճի և զբաղվածության բարձր մակարդակի ապահովման համար անհրաժեշտ պայմանները,
- տնտեսության ճյուղերի առանձնահատկությունները,
- պետություն-գործատուների միություն-արհեստակցական միություն եռակողմ բանակցությունները:

Նախանշված գործողությունների իրականացման արդյունքում մենք իրատեսական ենք համարում 2008թ-ից երկրում նվազագույն աշխատավարձը սահմանել առնվազն 50,000 դրամ և պարբերաբար իրականացնել դրա ինդեքսավորումը:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտում իրականացվող քաղաքականությունը հիմնվում է սոցիալական աջակցության, սոցիալական և կենսաթոշակային ապահովագրության, ինչպես նաև այլ համալիր միջոցառումների վրա:

Այստեղ կարևորում ենք՝

- վերականգնողական, իրավաբանական և խորհրդատվական օգնությունները, բնաիրային և դրամական օժանդակությունները, խնամքի կազմակերպումն ու ժամանակավոր օթևանի տրամադրումը,
- սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների կարողությունների հզորացումը և բնակչությանը մոտեցնելը:

Սոցիալական պաշտպանության ոլորտում առաջնահերթ ենք համարում՝

- բարձրացնել երեխայի ծննդյան միանվագ ներակայուն գործող նպաստի չափը (35000 դրամ) և ներդնել երեխաների ծննդյան հաջորդականությամբ պայմանավորված խրախուսման ամբողջական համակարգ: Մասնավորապես, ընտանիքում առաջին և երկրորդ երեխաների ծննդյան դեպքում՝ հատկացնել 200,000-ական դրամ, իսկ երրորդ երեխայի դեպքում՝ 2,000,000 դրամ, չորրորդ երեխայի դեպքում՝

2,500,000 դրամ: Հինգ և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին կտրամադրվի բնակարան,

- մասնակի վճարովի արձակուրդի ներկայումս գործող նպաստի չափը (3000 դրամ) բարձրացնել՝ այն հասցնելով նվազագույն աշխատավարձին,
- բարեփոխել ընտանեկան նպաստների համակարգը՝ օժանդակելով կայուն ընտանիքների ձևավորմանը, այն վերածելով կենսապահովման նվազագույն զամբյուղի ապահովման կարևոր գործիքի: Նպաստները պետք է ուղղել երեխա ունեցող ընտանիքներին և սոցիալական առանձին խմբերին (հաշմանդամներ, միայնակ, տարեց կենսաթոշակառուներ և այլն),
- նվազագույն կենսաթոշակը հասցնել առնվազն 30000 դրամի, իսկ միջին կենսաթոշակի չափը՝ առնվազն 50000 դրամ, այսօրվա՝ համապատասխանաբար 4250 և 13000 դրամի փոխարեն: Կենսաթոշակների վճարման ուղղված միջոցների տեսակարար կշիռը ՀՆԱ-ում՝ հասցնել 6 տոկոսի:

ԵՐԵՒԱՆԵՐԻ ՀԻՄՆԱՅԱՐՑԵՐ

Մենք մտադիր ենք երեխաների հիմնահարցերի լուծման քաղաքականությունն իրականացնել պետական ծրագրերի միջոցով, որոնք ուղղված կլինեն՝

- երեխաների խնամքի և պաշտպանության միասնական համակարգի ստեղծմանը,
- երեխաների խնամքը և պաշտպանությունն իրականացնող հաստատություններում (մանկատներ, հատուկ հանրակրթական ուսումնական և գիշերօթիկ խնամքի հաստատություններ) երեխաների թվի

նվազեցմանը և այդ հաստատություններ երեխաների հոսքի կանխարգելմանը,

- դժվարին իրավիճակներում գտնվող ընտանիքներին հասցեագրված դրամական և ոչ դրամական օժանդակության տրամադրմանը, կանխարգելելու համար երեխաների լքման և նրանց նկատմամբ բռնության դեպքերը,
- համայնքային սոցիալական աշխատանքների զարգացմանը (տարածքային սոցիալական ծառայության և երեխաների սոցիալական հոգածության համայնքային կենտրոնների միջոցով):

ԿԱՆԱՆՑ ԵՎ ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԻՐԱՎԱՅԱՎԱՍԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս ոլորտում քաղաքականությունն ուղղված կլինի կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հնարավորությունների օրենսդրական երաշխիքներով ապահովմանը՝ սեռային հատկանիշի վրա հիմնված խտրականության կանխարգելմանն ու չեզոքացմանը, այն դիտելով որպես երկրի կայուն և ներդաշնակ զարգացման գրավական: Այդ առումով մասնավորապես առաջնային ենք համարում՝

- իրականացնել առողջապահական աջակցության հատուկ ծրագրեր,
- ներդնել նորաստեղծ, բազմազավակ, հաշմանդամ խնամող, ինչպես նաև կանանց կողմից գլխավորվող ընտանիքների բարեկեցության բարձրացմանն ուղղված ծրագրեր,
- ներդնել մասնագիտական հմտությունների կատա-

րելագործմանն ուղղված մեխանիզմներ աշխատանքի շուկայում հատկապես կանանց մրցունակության բարձրացման նպատակով՝ ապահովելով ընտանեկան պարտականությունների համատեղումը,

- վերականգնել և զարգացնել նախադպրոցական հիմնարկների, երեխաների ցերեկային խնամքի կենտրոնների ցանցը գյուղերում և քաղաքներում,
- իրականացնել ծրագրեր՝ ուղղված գյուղական վայրերում տնայնագործության, արհեստագործության ծավալմանը, ինչպես նաև գյուղի սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում կանանց մասնակցության խթանմանը, այդ թվում՝ կանանց զբաղվածությունն ապահովող ժողովրդական արվեստների և արհեստների զարգացմանն ուղղված նպատակային ծրագրեր,
- իրականացնել կանանց քաղաքական իրավունքների իրացումն ապահովող քվոտավորման արդյունավետ մեխանիզմներ,
- խրախուսել հասարակության մեջ կանանց դերի բարձրացմանը և սեռերի իրավահավասարության ապահովմանն ուղղված քաղաքացիական հասարակության նախաձեռնությունները, ապահովել նրանց լիարժեք մասնակցությունը ռազմավարական բնույթի ծրագրերի մշակմանն ու իրագործմանը:

ՏԱՐԵՑՆԵՐ ԵՎ ՀԱՇՄԱՆԴԱՄՆԵՐ

Այստեղ իրականացվող քաղաքականությունը նպատակ ունի տարեցների համար ապահովել արժանապատիվ ծերություն, կանխարգելել հաշմանդամությունը և լուծել հասարակական կյանքին նրանց լիակատար ինտեգրման հիմնախնդիրները:

Այս առումով մասնավորապես առաջնահերթ ենք համարում՝

- սոցիալական այս խմբերի համար զբաղվածության ծրագրերի մշակումն ու իրագործումը,
- հաշմանդամ երեխաներին, երիտասարդներին և ընտանիքում հատուկ կարիքներ ունեցող անձանց անվճար կամ արտոնյալ պայմաններով ծառայությունների տրամադրումը, հաշմանդամներին հասարակական կյանքին լիարժեք ինտեգրվելու համար անհրաժեշտ պայմանների ապահովումը, նրանց համապատասխան ծառայություններ տրամադրելու, կրթություն ստանալու, աշխատանք ունենալու հետ կապված հարցերի իրավական և ֆինանսական կարգավորումը,
- հաշմանդամների որակյալ բուժսպասարկման և դեղորայքային ապահովման հարցերի լուծում,

Կարևորելով հաշմանդամության կանխարգելումը՝ մեր նպատակն է ներդնել արտադրությունում դժբախտ դեպքերից և մասնագիտական հիվանդություններից պարտադիր ապահովագրման, ինչպես նաև կյանքի և առողջության համար առավել վտանգավոր աշխատատեղերի ատեստավորման համակարգերը:

ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Դաշնակցությունը գիտության դերը տեսնում է երկրի անվտանգությանը, տնտեսական և ռազմական հզորացմանը ծառայելու մեջ:

Գիտության ոլորտի պետական քաղաքականության հիմնական նպատակները պետք է լինեն հանրապետության գիտական ու գիտատեխնիկական ներուժի զարգացումը, կադրերի պատրաստման արդյունավետ համակարգի ձևավորումը, գիտության, կրթության և արտադրության ինտեգրումը, գիտելիքի վրա հիմնված տնտեսության ստեղծումը:

Գիտության արդյունավետ զարգացման շահերից ելնելով՝ նախատեսում ենք.

- շեշտակի մեծացնել գիտական և գիտատեխնիկական գործունեության պետական բյուջեից ֆինանսավորման ծավալները հասցնելով այն ՀՆԱ-ի մոտավորապես 2 տոկոսին,
- գիտական աշխատանքների մակարդակի և մրցունակության բարձրացման, ինչպես նաև միջազգային գիտական ծրագրերում մասնակցության համար միավորել փոքր, միջին և միմյանց կրկնող գիտական կազմակերպությունները, խոշորացնել ներկայացվելիք թեմաները և ուղղորդել դրանց ելքերը դեպի բարձր տեխնոլոգիաներ,
- ձևավորել անկախ և մշտական գործող փորձագիտական համակարգ և ապահովել նրա արդյունավետ գործունեությունը,
- մշակել համապետական ծրագիր գիտական ներուժի պահպանման, երիտասարդացման, գիտական կոլեկտիվներին անհրաժեշտ պայմաններով ապա-

հովելու և գիտական կյանքի աշխուժացման համար: Պայմաններ ստեղծել գիտական կադրերի արտահոսքը Հայաստանից դադարեցնելու և այն աստիճանաբար ներհոսքով փոխարինելու համար:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթական համակարգը կոչված պետք է լինի ձևավորելու մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանի զարգացած, ինքնակազմակերպման ընդունակ, հայրենասիրության, մարդասիրության և ազգային պետականության համար հպարտության ոգով դաստիարակված քաղաքացիներ:

Կրթական համակարգում իրականացվելիք փոփոխությունների հիմնական նպատակները պետք է լինեն.

- բոլորի համար հասանելի, հավասար հնարավորություններ և որակյալ գիտելիքներ ապահովող համակարգի ձևավորումը, կրթության մատչելիության և շարունակականության ապահովումը,
- կրթության համակարգի կառավարման մարմինների լիազորությունների հստակ տարանջատումը, կրթական հաստատությունների կառավարման խորհուրդների աշխատանքների աշխուժացումը, վերահսկման մեխանիզմների, հաշվետվական համակարգի կատարելագործումը,
- կրթության և կրթական համակարգի աշխատողների հեղինակության բարձրացումը, կրթության բնագավառի աշխատողների աշխատավարձերի էական ավելացումը, նրանց պաշտպանվածության ապահովումը, աշխատակիցների որակական հատկա-



նիշների վրա հիմնված ատեստացիոն համակարգի մշակումն ու ներդրումը, ինչը կապահովի երիտասարդ որակյալ կադրերի մուտքը համակարգ,

- նախադպրոցական հաստատությունների ցանցի վերականգնումը, դրանց պահպանման և զարգացման համար համայնքային բյուջեներին պետական նպատակային աջակցության տրամադրումը, անկախ ընտանիքի սոցիալական վիճակից բոլոր երեխաների համար ման հաստատությունների մատչելիության ապահովումը,
- հանրապետության ամբողջ տարածքում ավագ դպրոցների այնպիսի ցանցի ստեղծումը, որը կապահովի որակյալ և արդյունավետ միջնակարգ կրթություն բոլոր ցանկացողների համար,
- դպրոցի ավարտական և ԲՈՒՅ ընդունելության քննությունների արդար և հավասար հնարավորություններ ապահովող միասնական համակարգի ներդրումը, որը կերաշխավորի ԲՈՒՅ ընդունվելը միայն գիտելիքի չափանիշով,
- մասնավոր դպրոցական այնպիսի համակարգի զարգացումը, որը առողջ մրցակցության մեջ մտնելով պետական կրթական հաստատությունների հետ կնպաստի կրթության որակի բարձրացմանը ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ մարզերում,
- պետական պատվերի ձևավորման և իրականացման մեխանիզմների հստակեցումը, աշխատաշուկայի և պետական կարիքի ուսումնասիրությունների և վերլուծությունների հիման վրա մասնագետների պատրաստման և վերապատրաստման նպատակով գիտության, կրթության և արտադրության համակարգերի միջև պայմանագրային հարաբերությունների արմատավորումը,

- սոցիալական խոցելի խմբերի համար մասնագիտական կողմնորոշման և վերապատրաստման համակարգի ներդրումը,
- ուսուցման նոր տեխնոլոգիաների և մեթոդների ներդրումը,
- միջազգային կրթական համակարգին ինտեգրումը, կրթության վկայականների փոխադարձ ճանաչումը, որակավորումների և կրթական աստիճանների ու կոչումների համապատասխանության համադրելիության ապահովումը:

ՄՇԱԿՈՒՅԹ

Հայկական մշակութային ժառանգության պահպանումը, նոր արժեքների ստեղծումը, մշակութային կյանքի խթանումը եւ հայ հասարակության համակարգային բարեփոխման հաջողությունն ապահովող ազգային մշակութի հենքի ձևավորումը պետք է լինեն պետության ուշադրության կենտրոնում:

Պետության մշակութային քաղաքականության առաջնահերթություններն են՝

- հայկական մշակութային ժառանգության պահպանումը, ժողովրդականացումը, տարածումը,
- ստեղծագործական և գեղարվեստական կրթության համակարգի պահպանումն ու զարգացումը,
- հասարակության բոլոր խմբերի համար մշակութային արժեքների մատչելիության ապահովումը,
- մայրաքաղաքից դուրս մշակութային կյանքի աշխուժացումը,
- ստեղծագործական գործունեության աջակցությունը՝

այդ թվում պետական դրամաշնորհների, պետական ստեղծագործական պատվերների, ստեղծագործությունների գնման համակարգի ներդրման միջոցով,

- համաշխարհային մշակութային արժեքներին հաղորդակցվելու հնարավորությունների զարգացումը,
- միասնական մշակութային տարածքի ձևավորումը ողջ հայության համար,
- Հայաստանի մշակութային կերպի ստեղծումը և ներկայացումը համաշխարհային հանրությանը:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական քաղաքականության նպատակները պետք է լինեն բնակչության առողջական մակարդակի բարձրացումը, առողջ երիտասարդ սերնդի դաստիարակությունը, պրոֆեսիոնալ սպորտի զարգացումը:

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտում պետական քաղաքականության հիմնական ուղղությունները պետք է լինեն.

- զանգվածային սպորտի և հայկական ավանդական մարզաձևերի զարգացումը,
- սպորտի մասսայականության ապահովումը՝ բոլոր տարիքային խմբերի համար,
- մանկապատանեական մարզական հաստատությունների ցանցի ընդլայնումը,
- համապատասխան մասնագետների (մարզական կադրերի) պատրաստումը,
- ֆիզիկական կուլտուրայի և սպորտի, առողջ ապելակերպի քարոզչությունը,

- ֆինանսական լուրջ օգնության ցուցաբերումը օլիմպիական խաղերի, աշխարհի և Եվրոպայի առաջնությունների մրցանակակիրներին և նրանց մարզիչներին,
- պրոֆեսիոնալ սպորտի նպատակային զարգացման խթանումը, հայկական սպորտի նվաճումների քարոզչությունը և նրա հեղինակության բարձրացումը միջազգային ասպարեզում,
- միջազգային ասպարեզներում հայ մարզիկների և ազգային հավաքականների պատշաճ ներկայացման ապահովումը:

ԱՌՈՂՋԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտում կարևորվում են կառավարման առավել արդյունավետ համակարգի ձևավորումը, ինչպես նաև առողջապահական ծառայությունների ֆինանսավորման, լիցենզավորման և որակի վերահսկման արդյունավետ համակարգի կայացումը: Այս բնագավառում անհրաժեշտ է.

- շարունակել ոլորտի արդիականացման գործընթացը, բարձրացնել պետության կողմից տրամադրվող Ֆինանսական միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործման մակարդակը,
- առանձնակի ուշադրություն դարձնել մարզային ու համայնքային առողջապահության զարգացմանը, վերջիններիս մասնագիտական ու նյութատեխնիկական բազայի բարելավմանը,
- ապահովել հեռավոր և սահմանամերձ բնակավայրերը որակյալ բժշկական կադրերով,
- շարունակելով վարակիչ հիվանդությունների դեմ

պայքարի ծրագրերը, որպես գերակա խնդիր դիտել ոչ վարակիչ հիվանդությունների դեմ պայքարի ծրագրի ներդրումը, քանզի վերջիններս են հանդիսանում բնակչության հիվանդացության և մահացության հիմնական պատճառը,

- վճռական քայլեր ձեռնարկել առողջապահության համակարգում ոչ պաշտոնական վճարումները վերացնելու համար,
- խիստ վերահսկողություն սահմանել դեղերի շուկայի նկատմամբ,
- առողջապահության ոլորտի պետական ? ֆինանսական հոսքերը հիմնականում նպատակաուղղել դեպի պետական ենթակայության բուժաստատությունները, կտրուկ բարելավելով վերջիններիս նյութատեխնիկական բազան,
- ձեռնարկել գործնական քայլեր բնակչությանն անվճար մատուցվող բժշկական օգնության համակարգի արմատական բարելավման, բժշկական օգնության որակի ու մատչելիության ապահովման ուղղությամբ,
- ներդնել պարտադիր և կամավոր բժշկական ապահովագրության համակարգերը՝ բնակչության առանձին խմբերի համար կիրառելով տարբերակված մոտեցումներ: Սոցիալապես խոցելի խմբերի, կենսաթոշակառուների և երեխաների համար որպես ապահովագիր պետք է հանդես գա պետությունը: Մինչև ապահովագրության համակարգի ներդրումը շարունակել պետության հովանու ներքո պահել բնակչության առավել խոցելի խավերի, ներառյալ երեխաների և մայրերի բուժսպասարկումը:

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքաշինության բնագավառում պետական քաղաքականության հիմնական գերակայությունը պետք է լինի հանրապետության բոլոր տարածաշրջաններում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորումը: Այս բնագավառում անհրաժեշտ ենք համարում.

- աստիճանաբար նվազեցնել այն հսկայական տարբերությանը, որ գոյություն ունի մայրաքաղաքի և սահմանամերձ գրեթե բոլոր տարածաշրջանների զարգացման մակարդակների՝ ինժեներատրանսպորտային, արտադրական, սոցիալական, մշակութային ու գիտական ենթակառուցվածքներով նրանց ապահովվածության միջև,
- նկատի ունենալով սեյսմիկ ռիսկերի առկայությունը, կտրուկ միջոցառումներ ձեռնարկել հանրապետությունում, հատկապես Երևանում ու ավտոմայրուղիներին հարող տարածքներում կառուցապատման խտության աճի միտումները կանխարգելելու ուղղությամբ,
- որպես գերակայություն դիտարկել հակասողանքային միջոցառումների իրականացման հետ կապված ծրագրերը,
- առաջնահերթության կարգով մշակել քաղաքաշինական ծրագրային փաստաթղթեր՝ հողի ակտիվ շուկա ունեցող տարածաշրջանների և համայնքների համար,
- ձևավորել քաղաքաշինական գործունեության վերահսկողության արդյունավետ համակարգ՝ հստակորեն տարանջատելով պետության, համայնքի և մասնավոր հատվածի գործառույթները,

- ձեռնարկել գործնական քայլեր՝ ճարտարապետության ազգային ավանդույթները պահպանելու և բնակավայրերի՝ պատմականորեն ձևավորված քաղաքաշինական միջավայրը անխաթար պահելու ուղղությամբ:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ-ԿՈՄՈՒՆԱԼ ՈԼՈՐՏ

Բնակարանային պայմանների բարելավումը, որակյալ կոմունալ ծառայությունների մատչելիությունը բնակչության կենսապայմանների մակարդակի կարևորագույն ցուցանիշներից են և շոշափում են բոլոր քաղաքացիների շահերը:

Մենք գտնում ենք.

- սոցիալապես առավել խոցելի խմբերում ընդգրկված՝ հատկապես սահմանամերձ և բարձր լեռնային բնակավայրերում բնակվող ընտանիքների բնակարանային պայմանների բարելավման հետ կապված խնդիրները պետական միջամտության կարիք ունեն: Այս խնդրի լուծման հիմնական ուղղություններից է սոցիալական բնակֆոնդի ձևավորումը՝ բնակարանների/բնակելի տների կառուցման (անավարտ շինարարություն, վերակառուցում, նոր շինարարություն) կամ շուկայից ձեռքբերման (գնում, վարձակալում) միջոցով:
- կարևորագույն խնդիր է նորաստեղծ երիտասարդ ընտանիքների, բազմազավակ ընտանիքների և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների բնակարանային ապահովությունը:
- չափազանց կարևոր է ձեռնարկել արդյունավետ քայլեր ներկա բնակարանային ֆոնդը պահպանե-

լու համար: Անհրաժեշտ է սահմանել պետական աջակցության միջոցով իրականացման ենթակա այն միջոցառումները (այդ թվում նաև տեխնիկական և ֆինանսական աջակցություն), որոնք կնպաստեն բազմաբնակարան շենքերում կառավարման մարմինների հիմնադրման, կայացման և ամրապնդման գործընթացի աշխուժացմանը, արդյունքում՝ շենքերի պահպանման և սպասարկման որակի բարձրացմանը: Այդ միջոցները պետք է նպաստեն նաև սեփականատերերի կողմից շենքի ընդհանուր օգտագործման գույքի նկատմամբ սեփականատիրոջ մտայնության արժատավորմանը և խորացմանը:

- նկատի ունենալով մշտական ջրամատակարարման ապահովման հնարավորությունը՝ անհրաժեշտ է կրճատել ցանցերում ջրակորուստները, ընդլայնել ջրամատակարարման ինքնահոս համակարգերի կառուցման ծավալները, զարգացնել ջրի ծախսերի հաշվառման արդյունավետ համակարգեր,
- պետք է ընդլայնել զազամատակարարման ցանցերը, ներդնել և վերականգնել անհատական, լոկալ և կենտրոնացված ջերմամատակարարման համակարգեր՝ ելնելով կոնկրետ դեպքում դրանց կիրառման արդյունավետությունից.
- աղբահանության բնագավառում պետք է ներդնել կայուն կառավարման համակարգ՝ արժատապես վերանայելով աղբահանության գոյություն ունեցող մեխանիզմները: Խնդրի կարգավորումը պետք է դիտարկել գործընթացի ամբողջական շղթայում՝ աղբի տեղափոխում, կուտակում, վերամշակում և դրավնասագերծման կազմակերպում:



Մայիս 2007





Մայիս 2007

